ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մայիսի 2015 թ. № 11

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը	Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա
Կրճատ անվանումը	ՀՀ ՊԿԱ
Կազմակերպաիրավական ձևը	ՊՈԱԿ
Գործունեության հասցեն	ՀՀ, ք. Երևան, Կիևյան 8
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը	Չի ունեցել

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2015թ. մայիսի 21-ի դռնբաց նիստում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա (այսուհետ՝ Ակադեմիա), ԿԳՆ-ի ներկայացուցիչների, փորձագիտական խմբի ղեկավարի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Ակադեմիայի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների

վերացման մասին Ակադեմիայի գործողությունների ծրագիրը, ՈԱԱԿ-ի եզրակացությունը՝ ամրագրեց հետևյալը:

Հավատրմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	**17 հունիսի 2013**
բուհի ինքնավերլուծության ներկայացում	**16 դեկտեմբերի 2013, 24 հունվարի 2014**
փորձագիտական այցի իրականացում	**12-16 մայիսի 2014**
փորձագիտական զեկույցի ներկայացում	**02 սեպտեմբերի 2014**
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	**1 հոկտեմբերի 2014**

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ՀՀ կառավարության 1994 թվականի մայիսի 24-ի N 240 որոշման համաձայն ստեղծված Հայաստանի Հանրապետության կառավարման դպրոցի իրավահաջորդն է: Կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 370-Ա որոշմամբ Ակադեմիայում հիմք է դրվել մագիստրոսական ծրագրերով ուսուցմանը՝ հանրային կառավարում, իրավագիտություն, տնտեսագիտություն, հոգեբանություն և քաղաքագիտություն մասնագիտությունների գծով:

Իր գործունեության ընթացքում Ակադեմիան հավատարմագրում չի անցել, ուստի ինստիտուցիոնալ կարողությունների տասը տիրույթների ուղղությամբ ինքնավերլուծության այս գործընթացն առաջին փորձն է:

Ակադեմիան տրամադրում է բարձրագույն մասնագիտական կրթություն, ինչը համապատասխանում է ՀՀ ՈԱՇ-ի 7-րդ և 8-րդ մակարդակներին: Հաստատությունն իր կարևոր նպատակներից է համարում եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելը և իր կառավարման գործընթացում այդ տարածքի ընթացակարգերի ներդնումը: Մասնագիտության կրթական ծրագրերն ընդհանուր առմամբ բխում են Ակադեմիայի առաքելությունից ու նպատակներից և համապատասխանում են պետական կրթական չափորոշիչների պահանջներին: Սակայն, միջազգայնացման տեսանկյունից դեռևս առկա է բենչմարքինգի ավելի արդյունավետ մեխանիզմների իրականացման անհրաժեշտություն, ինչը կխթաներ առկա սահմանափակ շարժունությունը:

Ակադեմիայի կառավարման համակարգը, վարչական ստորաբաժանումները և դրանց գործառնումը ենթադրում են որոշումների կայացման մասնակցային գործընթացներ՝ դասախոսների և ուսանողների ներգրավմամբ: Ինստիտուցիոնալ որոշումների ընդունումն իրականացնում են կառավարման կազմակերպական կառուցվածքով նախատեսված կոլեգիալ մարմինները: Առկա է, սակայն, արտաքին շահակիցների հետ

համագործակցության ընդլայնման և կառավարման կազմակերպական կառուցվածքի արդյունավետության գնահատման անհրաժեշտություն:

Ուսանողների ընտրությունն իրականացվում է մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգի հիման վրա, մրցույթով: Ուսանողների համար կազմակերպվում են դասախոսների հետ արտալսարանային հանդիպում-խորհրդատվություններ, ֆակուլտատիվ լրացուցիչ դասընթացներ: Համեմատաբար ցածր է ուսանողների՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը:

Հաշվի առնելով կառավարման համակարգի համար նպատակային կադրերի պատրաստման իր առանձնահատկությունը՝ Ակադեմիան ձգտում է աշխատանքի հրավիրել կառավարման ոլորտում գործող մասնագետների՝ պրակտիկ հմտությունների փոխանցման և ուսանողների գիտելիքներն ու կարողությունները աշխատաշուկայի պահանջներին առավել համապատասխանեցնելու նպատակով: Չնայած Ակադեմիայի գործունեությունն իրականացվում է մոտիվացված պրոֆեսորադասախոսական կազմի կողմից, սակայն առկա է դասախոսների ավելի համակարգված հավաքագրման, առաջխաղացման և կատարելագործման ընթացակարգերի արդյունավետ իրականացման անհրաժեշտություն:

Ակադեմիայում սահմանված, բայց դեռևս հստակ ձևավորված չեն հետազոտությունների ոլորտի հետաքրքրությունները և հավակնությունները: Ակադեմիայում իրականացվող սակավաթիվ միջնաժամկետ հետազոտական ծրագրերի արդյունքները բավարար չեն վերոգրյալ հետաքրքրությունների և հավակնությունների տեսանկյունից: Ակադեմիայում հետազոտությունների կապն ուսումնական գործընթացի հետ խրախուսվում է, սակայն առայժմ ձևավորված չեն հստակ մեխանիզմներ հետազոտությունների իրականացման և դրանցում սովորողների ընդգրկման, ինչպես նաև հետազոտությունների արդյունքներն ուսումնական գործընթացում ներդնելու համար:

Ակադեմիայում տարվել են աշխատանքներ հաստատության ենթակառուցվածքները բարելավելու և դրանք կրթական ծրագրերին համապատասխանեցնելու ուղղությամբ՝ ապահովելով կրթական գործընթացի կազմակերպման համար համապատասխան նյութատեխնիկական հագեցվածությունը: Ակադեմիայի ֆինանսական միջոցները ձևավորվում են ուսանողների ուսման վճարներից, տարբեր վերապատրաստման դասընթացների իրականացումից, շաբաթաթերթի իրացումից, այլ եկամուտներից:

2010 թվականի օգոստոսի 1-ին ստեղծվել է Ակադեմիայի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը, որն իր աշխատանքներն առավել ակտիվ սկսել է իրականացնել 2012 թվականից: Մշակվել է Ակադեմիայի որակի ապահովման հայեցակարգը, որը սահմանում է համապատասխան ընդհանուր պահանջները և սկզբունքները, ինչպես նաև կազմակերպական կառուցվածքը: Մշակվել է նաև որակի ապահովման ձեռնարկը: Ակադեմիայում որակի ներքին ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է: Այժմ իրականացվում են աշխատանքներ որակի ապահովման համակարգի մեխանիզմների և իրականացման ձևաչափերի մշակման ուղղությամբ:

Ակադեմիային առաջարկվում է իր ռազմավարության շրջանակներում իրականացնել հետևյալ խորհրդատվությունները, որոնք ուղղված են հավատարմագրման գործընթացում փորձագիտական խմբի կողմից վերհանված խնդիրների հաղթահարմանը և Ակադեմիայի գործունեության հետագա բարելավմանը.

Առաքելություն և նպատակներ.

1. կատարելագործել առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմները ու մշակել դրանց իրականացման հստակ ընթացակարգեր, հստակեցնել ռազմավարական ծրագրով նախատեսված սպասվելիք արդյունքները և դրանց գնահատման ցուցիչները,
2. ընդլայնել Ակադեմիայի արտաքին շահակիցների շրջանակը և ապահովել առավել ակտիվ մասնակցությունը կարիքների վերհանման, ռազմավարական նպատակների ու խնդիրների սահմանման, ինչպես նաև կառավարման գործընթացներում,

Կառավարում ու վարչարարություն.

3. անցնել պլանավորման եռաստիճան համակարգի՝ մշակելով նաև միջնաժամկետ ծրագրեր,
4. հստակեցնել կառավարման կոլեգիալ մարմինների դերը Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման հարցում՝ ընդլայնելով ուսանողության մասնակցությունն այդ մարմինների աշխատանքներին,

Մասնագիտության կրթական ծրագրեր.

5. հստակեցնել ՄԿԾ-ներով սահմանված վերջնարդյունքներն ըստ մասնագիտությունների, դրանց համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին,
6. մշակել մասնագիտության կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ, կիրառել հստակ չափելի ցուցանիշներ որակի համալիր գնահատման համար,
7. բազմազանեցնել դասավանդման մեթոդները, դրանք ուղղել սահմանված կոմպետենցիաների ձեռքբերմանը՝ համապատասխան ռեսուրսների զարգացման միջոցով,
8. վերանայել ուսանողների գնահատման համակարգը, հստակեցնել գնահատման չափանիշները,
9. գործուն միջոցառումներ ձեռնարկել դասախոսների և ուսանողների միջազգային շարժունակությունը մեծացնելու համար,

Ուսանողներ.

10. կատարելագործել Ակադեմիայում գործող՝ ուսանողների, հատկապես հեռակա կրթություն ստացող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման ցուցիչները և որակի ապահովման մեխանիզմները, իսկ ստացված արդյունքները կիրառել Ակադեմիայի զարգացման կամ ռազմավարական ծրագրերում,
11. կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմները,
12. մշակել ու ներդնել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների հստակ ընթացակարգեր: Մասնավորապես, նպատակահարմար է մշակել առարկայական ծրագրերով՝ լրացուցիչ պարապմունքների համար նախատեսված դասաժամերի կատարման վերահսկողության մեխանիզմներ,
13. ընդլայնել մասնագիտական կողմնորոշման աշխատանքները,
14. սահմանել վարչական անձնակազմին ուսանողների դիմելու կանոնակարգ և ժամանակացույց,

15. ուսանողների կարիերային աջակցելու նպատակով նրանց նախապատրաստել համապատասխան աշխատատեղերի համար նախատեսված ընթացակարգերին, հատկապես՝ քաղաքացիական ծառայության համակարգի մրցույթներին,
16. ձևավորել ՈՒԳԸ, ՈՒԳԽ, ավելի շատ ուշադրություն դարձնել դասախոս-ուսանող գիտական համատեղ աշխատանքներ կատարելուն, ուսանողների և դասախոսների գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածության աստիճանի բարձրացմանը,
17. ավելի մեծ ուշադրություն դարձնել ուսանողների իրավունքների պաշտպանության խնդիրներին, այդ գործառույթները տարածելով Ակադեմիայի կառուցվածքային որոշ միավորների վրա, ստեղծել իրավաբանական ծառայություն՝ խորհրդատվություն և այլ ծառայություններ տրամադրելու նպատակով,

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ.

18. լրամշակել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության, կատարելագործման և մասնագիտական առաջընթացի ապահովմանն ուղղված քաղաքականությունը, մշակել ընթացակարգերի գնահատման մեխանիզմներ,
19. հրավիրված և նոր ընտրված պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար անցկացնել մասնագիտական մանկավարժության վերապատրաստման դասընթացներ,
20. մշակել դասախոսների մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ՝ ըստ յուրաքանչյուր դասավանդվող առարկայի,

Հետազոտություն և զարգացում.

21. մշակել հետազոտությունների իրականացումն ապահովող հստակ քաղաքականություն և համապատասխան ընթացակարգեր, որոնք հնարավորություն կընձեռեն գնահատելու գիտահետազոտական գործունեության որակը,
22. մշակել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման, գիտական աշխատանքներում ուսանողների ներգրավման և հետազոտության արդյունքներն ուսումնական գործընթացում ներդնելու գործուն մեխանիզմներ, մշակել դասախոսների և ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող մեխանիզմներ,
23. առավել մեծ ուշադրություն դարձնել հետազոտության ոլորտում Ակադեմիայի հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի մշակման, դրանց հայտավորման և իրականացման վրա,
24. ուշադրություն դարձնել պրոֆեսորադասախոսական կազմի օտար լեզուների տիրապետման և արտասահմանյան առաջնակարգ գիտական հանդեսներում ավելի մեծաքանակ հոդվածներ տպագրելու գործընթացներին,
25. առավել մեծ ուշադրություն դարձնել «Հանրային կառավարում» ամսագրում տպագրվող աշխատաքների արդիականությանը, հոդվածների գրախոսման և գիտականության ապահովման գործընթացներին,
26. մշակել հետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականություն,

Ենթակառուցվածք և ռեսուրսներ.

27. մշակել ֆինանսական միջոցների բաշխման հստակ քաղաքականություն, սահմանել այդ քաղաքականության արդյունավետության գնահատման չափանիշներ և մեխանիզմներ,
28. նպատակային աշխատանքներ տանել գրադարանային ֆոնդը հարստացնելու, այլ գրադարանների հետ համագործակցելու, գրադարանի աշխատակիցների աշխատանքային ունակությունները զարգացնելու, կրթական գործընթացին անմիջականորեն առնչվող գրականությունը թվայնացնելու և այն ուսանողների ու դասախոսների կարիքներին ավելի համապատասխանեցնելու ուղղությամբ,
29. մշակել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ,
30. պարբերաբար մոնիթորինգ իրականացնել ձեռք բերված միջոցների և սարքավորումների գործարկման նկատմամբ՝ Ակադեմիայի առաքելությանը և նպատակներին համապատասխանության տեսանկյունից՝ մշակելով մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար Ակադեմիայի ռեսուրսային բազայի արդիականացման արդյունավետության ցուցանիշներ,
31. ստեղծել բուժկետ, ինչպես նաև ապահովել շինություններն ու լսարանները համապատասխան նյութատեխնիկական պայմաններով՝ հնարավոր դարձնելով հատուկ կարիքներ ունեցող սովորողների ուսուցումը՝ ապահովելով ներառական կրթության իրականացումը,
32. ձևավորել լինգաֆոնային կաբինետ՝ ուսանողների և աշխատակիցների օտար լեզուների ուսուցման մակարդակի բարձրացման նպատակով, մշակել օտար լեզուների ուսուցման դասընթացների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ,

Հասարակական պատասխանատվություն.

33. դիվերսիֆիկացնել ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ պլանավորելով և գործարկելով հետադարձ կապի ամրապնդման, ինչպես նաև շահակիցների կարիքների գնահատման արդյունավետ նոր ու կայուն մեխանիզմներ,
34. ստեղծել շրջանավարտների մեկ միասնական տեղեկատվական բազա,
35. ավելի ակտիվ դերակատարում ունենալ թիրախային տարբեր խմբերի կրթական կարիքների վերհանման գործում,

Արտաքին կապեր և միջազգայնացում.

36. զարգացնել Ակադեմիայի և պետական կառավարման մարմինների ու կազմակերպությունների միջև բազմակողմանի փոխհամագործակցության ձևերն ու մշակել նոր մոտեցումներ՝ ընդլայնելով արտաքին շահակիցների շրջանակը,
37. նպատակային դարձնել միջազգային փորձի փոխանակման գործընթացները՝ դրանք ծառայեցնելով Ակադեմիայի հիմնական խնդիրները լուծելուն և ավելի մեծ ուշադրություն դարձնել տեղական հաստատությունների հետ համագործակցությանը,

38. վերանայել Ակադեմիայի հավակնությունները միջազգայնացման ոլորտում՝ ելնելով առաքելությունից և ռազմավարական խնդիրներից,
39. մշակել հստակ մեխանիզմներ կնքված միջհամալսարանական պայմանագրերի և Ակադեմիայի կրթական գործընթացների միջև կապն ավելի ամրապնդելու նպատակով, դրանով իսկ նպաստելով հաստատության զարգացմանը փորձի փոխանակմանը և ուսումնական գործընթացի միջազգայնացմանը,
40. ներդնել այլ կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքների գնահատման և արտաքին կապերի հաստատմանն ուղղված միջոցառումների նպատակայնության մեխանիզմներ,
41. մշակել բենչմարկինգի իրականացման կանոնակարգված ձևաչափ,

Որակի ներքին ապահովման համակարգ.

42. լրամշակել որակի ապահովմանն ուղղված քաղաքականության իրականացման անհրաժեշտ ընթացակարգերը, դրանց գնահատման մեխանիզմները, կրթության որակի բարձրացման հստակ չափելի ցուցիչներ և արդյունավետության չափման մեխանիզմներ,
43. մշակել հետադարձ կապի առավել արդյունավետ մեխանիզմներ և ապահովել դրանց արդյունավետ կիրարկումը, լրամշակել հարցաշարերի բովանդակությունները, բարելավել հարցախույզ իրականացնելու ձևաչափը, մեթոդները,
44. մշակել որակի ներքին ապահովման գործընթացներում ներգրավված մարդկային ռեսուրսների շահադրդման մեխանիզմներ,
45. ապահովել որակի ապահովման կառույցներում ընդգրկված անձնակազմի պարբերաբար վերապատրաստման դասընթացներ իրականացումը,
46. ավելի համամասնական դարձնել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում,
47. մշակել տրամադրված մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների համապատասխանության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ,
48. հստակեցնել Ակադեմիայում իրականացվող մոնիթորինգների և սոցիոլոգիական հարցումների սկզբունքները և նպատակները, մշակել հարցումների վերլուծության և կրթության որակի բարելավման քաղաքականություն:

Ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերի փաթեթը, լսելով փորձագիտական խմբի ղեկավարի և բուհի ներկայացուցիչների կարծիքները՝ Հավատարմագրման հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ պետական կառավարման ակադեմիան բավարար չափով իրականացնում է իր առջև դրված հիմնական նպատակը՝ ՀՀ հանրային ծառայության համակարգի պահանջներին համապատասխան վարչակառավարչական, քաղաքական, սոցիալական, իրավական և տնտեսական ոլորտների համար բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստումը: Հաշվի առնելով, որ Ակադեմիան իրականացնում է բացառապես մագիստրոսական կրթական ծրագրեր, **«Հետազոտություն և զարգացում»** ոլորտում վերհանված թերությունները վտանգում են ՀՀ Որակավորումների Ազգային Շրջանակի 7-րդ մակարդակին համապատասխան մասնագետների պատրաստումը՝ անդրադառնալով նրանց հետազոտական կարողությունների և հմտությունների ձևավորման

վրա, քանի որ ծրագրերը բովանդակային առումով ոչ լիովին են համապատասխանում ՈԱՇ-ին:

Ակադեմիան, ակտիվացնելով իր համագործակցությունը ներքին և արտաքին շահակիցների հետ, պետք է լուրջ քայլեր ձեռնարկի կրթական ծրագրերի արդիականացման և հետազոտական բնույթ հաղորդելու, ուսումնառության ռեսուրսների բարելավման ուղղությամբ: Պետք է շարունակել կառավարման ոլորտում գործող մասնագետների աշխատանքի հրավիրելու քաղաքականությունը՝ կարևորելով հետազոտական բաղադրիչը դասախոսների հավաքագրման, խթանման և առաջխաղացման գործընթացներում: Անհրաժեշտ է հստակեցնել Ակադեմիայի համար հետազոտությունների ոլորտի հետաքրքրությունները և առաջնային ուղղությունները, նախաձեռնել բազային հետազոտական լաբորատորիաների ստեղծումը, դրամաշնորհային ծրագրերի և ատենախոսական թեմաների իրականացումը այդ ուղղություններով, ուսանողներին ընդգրկել գիտահետազոտական աշխատանքներում, ամրապնդել դասավանդման և հետազոտության միջև կապը: Հակառակ դեպքում այս խնդիրները կարող են ռիսկային լինել որակյալ մասնագետների պատրաստման գործում:

Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացումը և խորհրդատվությունների իրականացումը կապահովեն մատուցվող կրթական ծառայությունների ուսանողակենտրոն և հետազոտական բնույթը, միջազգային չափանիշներին հետ համեմատելի լինելը՝ ինչը համապատասխանում է հաստատության հավակնություններին և ռազմավարությանը:

Ակադեմիան, ընդունելով բոլոր 10 չափանիշներում տրված խորհրդատվությունները, մշակել է «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիր», որում պլանավորել է անհրաժեշտ աշխատանքների իրականացումը 2015-2016թթ. ընթացքում: Այդ աշխատանքները հիմնականում ունեն իրականացման իրատեսական ժամանակահատված, փոխկապակցված են ընտրված ռազմավարությունների հետ, ունեն տրամաբանական հաջորդականություն և պատասխանատուներ: Անհրաժեշտ է նախատեսված միջոցառումներն ապահովել համապատասխան և բավարար ռեսուրսներով՝ հնարավոր ռիսկերից խուսափելու համար, ինչպես նաև հաշվի առնել միջազգային չափանիշներին համապատասխան գործընկերային գնահատման դիտարկումները և խորհրդատվությունները:

Հաշվի առնելով, որ Ակադեմիան, մեթոդաբար կիրառելով իր ունեցած ներքին որակի ապահովման մեխանիզմները, կարող է ողջամիտ ժամանակահատվածում վերացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունները և իրականացնել խորհրդատվությունները, Հանձնաժողովը քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիային շնորհել Ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.

   ա) **«Հետազոտություն և զարգացում»** ոլորտում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

   բ) միջազգային չափանիշներին համապատասխան գործընկերային գնահատման արդյունքները և խորհրդատվությունները:

   գ/ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման գործողությունների ակտիվացման անհրաժեշտությունը:
3. Հաստատության գործունեության բարելավման համար, ելնելով այսօրվա պահանջներից, հատուկ ուշադրություն դարձնել որակի ապահովման համակարգի կայունացմանը, կրթական ծրագրերի և անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի արդիականացմանը, դասախոսների և ուսանողների շարժունությանը, ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը, պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստմանը:
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Վ. Ուռուտյան**

2015 թ. մայիսի 29
ք.Երևան